ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 18 >> 09 2014թ. N: 80 ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի>> 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարալիկ համայնքի Թումանյան փողոցի մասնակի վերանորոգման աշխատանքները ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված ժամկետում և կարգով կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
ՀՀ Շիրակի մարզպետի
2014 թվականի 09 18 ի
N 80 կարգադրության

Կ Ա Ձ Մ
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալբերտ Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ նախագահ,

Անդամներ՝

Խաչատուր Խնձրցյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,

Գևորգ Եղիազարյան - Քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ - քաղաքաշինական պետական տեսուչ,

Կարապետ Առաքելյան - <<Անիի ՃՇՇ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Արթուր Վարաժյան - <<ԱԳԷԱ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Անատոլի Դոգուզով - <<Երանգ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Արտակ Գևորգյան – Մարալիկի քաղաքապետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան